Տ. ՎՐԹԱՆԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ 22-ՐԴ ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(26 հունվարի, 2014 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Եկեք ելնենք Տիրոջ լեռը...Նա մեզ կսովորեցնի
իր ճանապարհները, որոնցով եւ կգնանք»
(Եսայի Բ. 3):

Շատ օրեր չեն անցել Սուրբ Ծննդյան եւ Աստվածհայտնության տոնից: Տաղավար տոն, որի ողջ խորհուրդն ի վերջո խաղաղության առաքումն է ողջ մարդկությանը, որ պատվիրանախախտության անեծքով արտաքսվեց Դրախտից, զրկվեց Աստծո ներկայությունից, կորցրեց խաղաղ ու անվրդով ապրելու պարգեւը, բայց երբեք չանտեսվեց Արարչի նախախնամությունից: Հենց այդ նախախնամությամբ ոչ միայն երկրի ու երկնքի միջեւ, ոչ միայն երկրի վրա, այլեւ հենց մարդկանց սրտերում հաշտություն ու խաղաղություն հաստատելու համար մարմնացավ, մարմին առավ Ինքը՝ Խաղաղությունը՝ Քրիստոս: Խաղաղությունը երկնային շնորհ է...

Հայտնի ճշմարտություն է, որ քրիստոնեությունը խաղաղության ու հանդուրժողականության, համերաշխության ու ներդաշնակության, այսինքն՝ սիրո կրոնն է, որ մարդկանց թելադրում է աշխարհում ապրել առանց տարաձայնությունների ու թշնամանքի: Թվարկված պայմանները ցանկալի են բոլորիս համար: Ամենքս էլ, սակայն, գիտակցում ենք, որ այսօր իրականության մեջ թվարկվածները պակասում են, ուստի անհրաժեշտություն է դառնում ունենալ զորավոր մի պատնեշ, որը կարող է հակադրվել բռնությանն ու բիրտ ուժին: Ամեն երկրի համար այդ զորությունը բանակն է: Քանի դեռ երկրի վրա տիեզերաձավալ խաղաղություն եւ մարդկանց միջեւ հաճություն չի հաստատվել, բանակն անհրաժեշտ պայման է մնում պետությունների ներքին եւ արտաքին անդորրն ապահովելու համար: Ցավոք, միշտ չէ, որ հանդուրժողականության ոգով ենք առաջնորդվում, մասնավորապես հայոց բանակից ներս, ինչը հաճախ առիթ է հանդիսանում գնալու դեպի ինքնախեղում, մի հանգամանք, որը մեծ մեղք է համարվում, քանզի խեղել Աստծո ստեղծած մարմինը, նշանակում է դեմ դուրս գալ Երկնային Տիրոջ Կամքին, ինչը, համաձայն Սուրբ Գրքի աններելի մեղք է:

Սիրեցյա՛լ հայ զինվորներ, մեր պետության պարագային զենքն ու բանակը երկրին կենսականորեն անհրաժեշտ են պաշտպանվելու նպատակով ու ոչ թե անօրեն ձգտումների եւ ոտնձգությունների՝ այլոց վրա արշավելու, ուրիշի սահմանները զավթելու եւ անմեղների արյուն հեղելու համար: Բանակներ կան, որոնք մահ են սփռում, բանակներ էլ՝ որոնք վերահաստատում են խաղաղությունն ու սերը: Ինքնապաշտպանությունը մարդու բնական, անկապտելի իրավունքներից մեկն է, որ ստիպում է ունենալ ուժեղ բանակ: Մեր երկրի վրա եկող թշնամին պետք է գիտակցի, որ իր բռնության դիմաց

կարող է համարժեք պատասխան ստանալ. սրով է գալիս՝ կարող է սրից էլ ընկնել: Խաչը հոգեւոր զենք է ընդդեմ չարի, որ պահպանում է ամեն ապավինողի, իսկ շրջվելով՝ դառնում ֆիզիկական զենք՝ պաշտպանելով նաեւ խաչին ապավինողի մարմինը: Այս առումով, հայ զինվորը պարտի գիտակցել, որ հաղթանակները չեն տրվում միմիայն զենքով, այլ հավատքի այն զորությամբ, որ դարեր շարունակ սերմանել են մեր մեջ մեր սուրբ եւ Քրիստոսաշավիղ հայրերը:

Այսօր որքան տոնական, նույնքան էլ նոր ձեռնարկներ կյանքի կոչելու մտածումներով ենք մեկտեղվել: Կյանքի անհանգիստ ընթացքը չի ներում հապաղումներ, այսօր մեր առջեւ նոր մարտահրավերներ են: Տարարտեսակ օտար եւ քայքայիչ գաղափարախոսություններ ներխուժել են Հայաստան, հայի հայրենիք եւ իրենց տանտիրոջ պես են զգում: Աղանդների մի ամբողջ շարք քարոզում է հեռու մնալ զենքից, այն առհասարակ համարում ապտվածընդդեմ եւ կոչ անում զենքի չդիմել՝ թշնամու կողմից մեր երկրի ու ընտանիքների պղծվելու դեպքում անգամ: Չեմ կարող նշյալ վտանգների շարքին չդասել փողոցային անբարո բարքերը, որոնք, հատկապես վերջին ժամանակներում թափանցել են հայ երիտասարդի կյանքից ներս, փորձելով կործանել նրա բարոյական կերպարը, մոռացության տալով հայ ոգին, հայ լեզուն, գիտակից հայ երիտասարդը, հայ ընտանիքի զավակը: Հայ ընտանիքը միշտ էլ առանձնահատուկ է եղել իր բարքով, սրբություններով եւ բարի ավանդություններով, առ այդ մենք պարտավոր ենք ամուր պահել հայ ընտանիքի սրբությունները, չենթարկվելով այն պարտադրված եւ անբարո գաղափարներին, որոնց հիմնական նպատակն է կործանել հայ մարդուն, առհասարակ: Այստեղ եւս հայոց բանակը, որպես առաջին պաշտպանը հայ ընտանիքի, պարտավորվում է դաստիարակել կիրթ եւ ուսյալ զինվորներ, ինչը, հուրախություն մեզ չի վրիպել նաեւ հայ զորականի ուշադրությունից. նրանք ձեռք ձեռքի տված հայ եկեղեցականի հետ, փորձում են անել հնարավորը՝ մեր հայրենիքին բարոյապես բարձր նկարագիր ունեցող հայ զինվոր մատուցելու համար:

Հայրենիքի անվտանգությունը պայմանավորված է ամեն մի զինվորով, յուրաքանչյուրի եւ ամենքի ոգու ուժը, միավորվելով, դառնում է «պարիսպ ամրության»: Հետեւաբար մեր խնդիրը նույն ուղղությամբ նայելն է, նույն մտքով գործելը եւ նույն նպատակը հետապնդելը, մանավանդ որ այս տարին ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով հայտարարված է «Փողոցային արատավոր բարքերի դեմ պայքարի տարի», բանակն ու հասարակությունն առողջացնելու տարի: Այսինքն՝ ունենք հանձնառություն, որին պետք է ավելացնել պատասխանատվություն ու նախանձախնդրություն, եւ կկարողանանք արձանագրել ցանկալին արդեն որպես գոյող իրականություն. չէ՞ որ խավարը տիրում է միայն այնտեղ, որտեղ բացակայում է լույսը:

Միշտ հիշենք՝ պատերազմը միայն արտաքին թշնամու դեմ չէ, պատերազմը միայն մարտի դաշտում չէ, այն ամեն մեկի ներսում է, յուրաքանչյուրիս հոգում:

«Եկեք ելնենք Տիրոջ լեռը... Նա մեզ կսովորեցնի իր ճանապարհները, որոնցով եւ կգնանք» (Եսայի Բ. 3):

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ ի Քրիստոս, Եսայի մարգարեի կոչն ասես մեզ է ուղղված, որ առաջարկվող «նոր» արժեքների ու արժեհամակարգերի ընտրության առաջ ենք կանգնած: Մեզ մատուցվում են գեղեցիկ փաթեթավորված ինչ-ինչ գաղափարներ,

որ անհարիր են ազգային մեր նկարագրին ու հոգեկերտվածքին, մեր հավատի ու դարերի փորձությունն անցած քրիստոնեական մեր աշխարհընկալմանը: Հին Ուխտի օրերում եւ դրանից էլ առաջ Աստված հայտնել էր իր կամքը, իր պահանջները, որոնք այսօր էլ նույնն են: Աշխարհը հնանում է, սակայն Աստծո կամքը միշտ նոր ու անփոփոխ է մնում: Աշխարհի իշխանը՝ չարը, ամեն մի նոր ժամանակին համապատասխան միջոցներով է փորձում իր կամքը պարտադրել մարդկությանը՝ առաջնորդելու համար դեպի անխուսափելի կործանում:

Այս պարագային որտեղի՞ց կամ ումի՞ց կարող ենք օգնություն սպասել: Փրկության ուղին ինչքան որ նոր, այնքան էլ հին է. այն սկսվում ու ավարտվում է Տիրոջ լեռան վրա, այսինքն՝ այս սուրբ փաճարի կամարների տակ: Այստեղ է, որ Աստված մշտապես սովորեցնում է իր ճանապարհները: Փրկության այս տապանում է, որ ամեն օր լուսավորվում են բազում մարդկային մտքեր եւ հոգիներ՝ առաջնորդելով կատարելու մեր Արարչի ու Հոր կամքը: Այս սրբազան հարկի տակ հայ քրիստոնյան ուղղորդվում է Աստծո ճանապարհով, որի փարոսն ու ուղենիշն արդարությունն է: Արդարությունն է այն ճշմարիտ չափանիշը, որ մեր հոգուն արդարադատ տեսողություն է շնորհում, թույլ տալիս ժամանակի փոշուց կամ փայլից անդին զանազանել պիղծն ու սուրբը, գարշելին ու գեղեցիկը, մարդահաճոն ու աստվածահաճոն: Ուստի թույլ տանք, որ Աստված մշտապես մեզ առաջնորդի դեպի իր ճանապարհները՝ առատորեն ողողված իր արդարության, սիրո ու ներման դրսեւորումներով:

Սաղմոսերգուն մեզ վստահեցնում է, որ ապահով են Տիրոջ ճանապարհները, ուստի մեզ մնում է գնալ այդ ճանապարհներով, փնտրել Աստծուն, դառնալ դեպի Նա ու քայլել ապահով ճանապարհներով, որով հայ իրականությունից եւ մեր ազգային կյանքից մերժած կլինենք հոգեզուրկ ընթացքները՝ իբրեւ փակուղի, քայլենք հավատով ու վստահությամբ՝ այն համոզումով, որ միայն պատվիրանապահ առաքինությամբ ու ավետարանական առակի տնտեսի նախանձախնդրությամբ կարող ենք վայելել Տիրոջ օրհնությունը՝ այս սուրբ հողի վրա ապրելու, արարելու եւ խաղաղությունը հարատեւ պահելու համար:

Սիրելինե՛ր, մեղքերն այնտեղ են առաջ գալիս, ուր Աստծո երկյուղը պակասում է, քանզի «իմաստության սկիզբը Տիրոջ նկատմամբ երկյուղն է»:

Դեռ ոչ մի քրիստոնյա ազգ չի տուժել իր հզոր եւ անսասան հավատքից: Իրական քրիստոնյան սիրում է արդարությունն ու ճշմարտությունը, քանզի «լրումն օրինացն սէր է» (Հռոմ. ԺԳ. 10), Բայց երբ քրիստոնյա ազգը սուտ ու անարդար կյանքով կորցնում է հոգեւոր աճը, իր սրտի անկեղծ հավատը վերածում անհավատության կամ սնահավատության, հեռանում, օտարանում է Եկեղեցու սուրբ խորանից եւ Աստծո տնից՝ իբրեւ ապստամբ, միայն առերես պատշաճը պահելու զորություն է ունենում՝ այլեւս անզոր ներշնչելու եւ ազնվացնելու հոգին: Այս ամենի հետեւանքը լինում է այն, որ ազգը կա՛մ ջնջվում է երկրի երեսից, կա՛մ գերի դառնում ուրիշ ազգերի: Միաբանությունը դեռ ոչ մի ազգ չի կործանել, հակառակը՝ այն, ինչ փոքր ու աննշան է թվացել, միավորվելով՝ մեծ ու փառավոր արդյունք է տվել: Այս համոզումով ենք ելել ամենամեծ վտանգների դեմ ու քաջությամբ հաղթել: Սա խոսում է այն մասին, որ Աստծո ճանապարհներին արդարություն է համարվում սեփական անձը հանուն բարեկամների վտանգելը,

որովհետեւ դա է սիրո բարձրագույն արտահայտությունը, ինչը վկայում է Տեր Հիսուս իր խոսքով ու կյանքով, ինչը իր անձնազոհությամբ փաստեց օրեր առաջ արիացյալ Արմեն Հովհաննիսյանը, որ մեր բոլոր նահապակ հերոսների պես իր կյանքը տվեց հանուն զինակիցների, հանուն հայրենիքի եւ դարձավ Փրկչի պատգամած սիրո բարձրագույն դրսեւորման կրողը:

«Ասված այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր Միածին Որդուն տվեց» (Հովհ. Գ. 16): Ասված, որ ամենքիս Արարիչն է, իր Որդուն զոհեց ամեն մեկիս փրկության համար՝ ճշմարիտ սիրո մի օրինակ տալով յուրաքանչյուրիս: Քրիստոնյաներիս կյանքը եւս ինքնազոհաբերման ընթացք է, ուստի մեր զավակներին պետք է դաստիարակենք հայրենասիրության ոգով, որը ենթադրում է ինքնազոհաբերում, պետք եղած դեպքում տալու մեր մասնավոր սեփականությունը, մինչեւ իսկ մեր անձը՝ հանուն ազգակիցների, սրբությունների ու Հայրենիքի: Երբ մարդը կարողանում է հավատից մղված իր մասնավորը տալ՝ պահելու համար ընդհանուրին պատկանողը՝ մարդասիրության ու հայրենասիրության ճշմարիտ օրինակ է տալիս: Երկրավոր գոյությունը տեւական չէ, ուստի պետք է փորձենք այդ կարճ կյանքի ընթացքն արժեւորել ինքնատվության ունակության դրսեւորմամբ, որովհետեւ պատմության ընթացքում մենք հաղթող ենք դուրս եկել պատերազմներից այն դեպքերում, երբ իսկապես քրիստոնյաներ ենք եղել՝ սիրել ենք մերձավորին մեր անձի պես ու մեր անձից ավելի, նմանվել Տիրոջը՝ մեր անձը տալով, որպեսզի ապրի մեր մերձավորը, մեր ազգը, Հայրենիքն ու Եկեղեցին: Նվիրումի ու զոհաբերության մեջ է կյանքի առաքինությունը. նա, ով միայն իր համար է ապրում, կենդանվույն մեռած է:

Պատմության ասպարեզից ժողովուրդների անհետանալու պատճառը հասարակության մեջ հոգեւոր ու բարոյական արժեքների մահն է, իսկ ավետարանական պատգամը դրանից խուսափելու լավագույն միջոցն է առաջարկում. «Խնդրեցե՛ք Աստծո արքայությունն ու նրա արդարությունը, եւ այդ բոլորը Աստված ձեզ ավելիով կտա» (Մատթ. Զ. 33): Հավատով ոգեշնչված ազգը տառապանքի ժամին ուժեղանում է, կռվի դաշտում՝ հերոսանում, բարիով հաղթում չարին: Երանի ազգի այն զավակներին, ովքեր վառվում, ճառագայթում, մոխիր են դառնում, որպեսզի մյուսները լուսավորվեն, փրկվեն, հուսան, ապրեն...

Սիրեցյալ հայ զորականներ, ազատամարտիկներ, զինվորներ, ծառայակիցներ, այսօր, երբ ողջ հայ ժողովուրդը տոնախմբում է հայոց հաղթական բանակի 22-րդ տարեդարձը, մեր աղոթքն ու մաղթանքն է, որ Երկնային Զորագլուխը հարորեն մեզ առաջնորդի դեպի նորանոր հաթանակներ, մշտապես մեր հոգում ունենալով Միածնաէջ սուրբ Աթոռի եւ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Հայրական սերն ու օրհնությունը:

«Եկեք ելնենք Տիրոջ լեռ... Նա մեզ կսովորեցնի իր ճանապարհները, որոնցով եւ կգնանք» (Եսայի Բ. 3):

Շնորհք սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ. Ամէն :